ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆԻ ՁԵԿՈՅՑԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ

(21 նոյեմբերի, 2014 թ.)

Վեհափառ Տէր,

Հոգեւոր հայրեր,

Ցարգելի՛ դասախօսներ եւ հիւրեր, սիրելի՛ սաներ.

Ողջունում ենք Ձեր ներկայութիւնը Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնադրութեան 140-ամեակին նուիրուած՝ «Եկեղեցի եւ կրթութիւն. Կոչում, դպրութիւն եւ առաքելութիւն» միջազգային գիտաժողովի առիթով:

Յոբելենական տարուայ միջոցառումների ցանկում տեսչութիւնն առանձնայատուկ նշանակութիւն է ընծայել այս գիտաժողովին: Այդ վերաբերմունքը չի սահմանափակւում միայն այն իրողութեամբ, որ Ճեմարանի 140-ամեակի հաւուր պատշաճի արժեւորումը ենթադրում է հաստատութեան իրականացրած առաքելութեան համակողմանի գնահատում:

Տեսչութիւնն այս գիտաժողովը սկիզբ է հռչակում այն նոր ուղու, որով Գէորգեան ճեմարանը յետայսու պիտի ընթանայ: Այս իմաստով սոյն գիտաժողովը նոր շրջափուլ է արձանագրում Ճեմարանի տարեգրութեան մէջ՝ որպէս ազգային բարձրագոյն կրթական հաստատութեան:

Վերջին շրջանի կրթական բարեփոխումները եւ հրատարակչական գործունէութիւնը, անխօս, վկայում են այն մասին, որ հաստատութիւնը նոր հուն է մտել. այս իմաստով այն ոչ միայն ձգտում է իր ուրոյն տեղը գրաւել հայրենի գիտակրթական կեանքում, այլեւ վերածնել դարասկզբի՝ Էջմիածնի հայագիտական դպրոցին բնորոշ այն աւանդները, որոնք ազգային գիտութեանը տուեցին այնպիսի պայծառ անուններ, ինչպէս օրինակ՝ Գէորգ Չէորեքչեան Կաթողիկոս, Կարապետ եպս. Տէր-Մկրտչեան, Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց, Կոմիտաս Վարդապետ, Երուանդ Տէր-Մինասեան, Դերենիկ Դեմիրճեան, Լեւոն Շանթ, Աւետիք Իսահակեան, Աւետիս Ահարոնեան, Մանուկ Աբեղեան, Յակոբ Մանանդեան, Ադոնց եւ այլք:

Ելնելով ասուածից՝ Ճեմարանը նպատակ ունի յետայսու ամեն տարի Թարգմանչաց տօնին հրաւիրել այսպիսի մի գիտաժողով, որի նիւթերը համապատասխան խմբագրական խորհրդի հաստատումից յետոյ կհրատարակուեն հաստատութեան գիտական տարեգրքում: Տեղին է նկատել, որ Ճեմարանը երբեւէ չի ունեցել գիտական տարեգիրք. ժամանակ առ ժամանակ, ընդմիջումներով հրատարակուել է ուսանողական մի ժողովածու: Այս գիտաժողովները, հետեւաբար, նպատակ ունեն նաեւ լուծելու այդ խնդիրը:

Սա վստահաբար կնպաստի Գէորգեան ճեմարանի դիրքի ամրապնդմանը մեր իրականութեան մէջ՝ որպէս բարձրագոյն կրթական հաստատութիւն, որը ոչ միայն գիտութիւն է ջամբում, այլեւ գիտութիւն է ստեղծում:

Եւ Ճեմարանի անցած ուղու համար մենք պարտական ենք մեր իմաստուն Հայրապետների անխոնջ եւ ինքնամոռաց ձեռնարկումներին, որոնք անխուսափելիօրէն «դատապարտուած» էին յաջողութեան, յաղթանակի եւ փառաւորման: Այսօր որքա՜ն պիտի բերկրէին մեր Հայրապետները, երբ տեսնէին 140-տարի առաջ հիմնադրուած Ճեմարանի անխոտոր ուղին, ձեռքբերումներն ու յաջողութիւնները: Ուստի լիովին բնական էր, որ այս յոբելենական տարուայ հանդիսութիւններով մենք ոչ միայն նշում էինք հայկական անկախ պետութեան ամենահին բարձրագոյն ուսումնական հաստատութեան 140-րդ տարեդարձը, այլեւ՝ փորձում արժանին մատուցել մեր Հայրապետներին, որոնց երազանքներն ու տեսլականներն իրականացան Գէորգեան հոգեւոր ճեմարանի կայացմամբ: Սակայն ո՛վ կամ ի՛նչը կարող է պանծացնել յիշատակն այն անմահների, որոնց փառքն իրենց անցած ուղին է, եւ գործերն են փայլարձակ պսակ: Մենք պարզապէս խոնարհւում ենք մեր իմաստուն դիտապետների առջեւ. թէ՛ անցեալի, թէ՛ ներկայիս... մեր համազգական Հովիւ-Քահանայապետների, որ իբրեւ Հայոց փրկութեան գերակայ ուղի՝ առանձնակի հոգածութիւն են ցուցաբերել, ցուցաբերում եւ պիտի ցուցաբերեն հայեցի կրթութեան ու դպրութեան նկատմամբ՝ դրանում տեսնելով Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնական առաքելութիւններից մէկը:

Թոյլ տուէք «Եկեղեցի եւ կրթութիւն. Կոչում, դպրութիւն եւ առաքելութիւն» վերտառութեամբ գիտաժողովը համարել բացուած՝ առանձնակի շնորհակալութիւն յայտնելով ԳՀՃ՝ Հայ ժողովրդի պատմութեան դասախօս տիար Աւետիս Յարութիւնեանին, ԳՀՃ փոխտեսուչ Գէորգ Մադոյեանին, որ ջանք ու եռանդ չխնայեցին այս կարեւոր գործը գլուխ բերելու համար: